

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots»
ծրագրերի» համար ՖՏ 2019.**

**«Զգայական ինտեգրացիայի սենյակի հիմնում` ի նպաստ հաշմանդամություն
ունեցող երեխաների, նրանց ընտանիքների և «Լուսե» կենտրոնի աշխատակազմի» ծրագրի
ստորագրման արարողությունը**

2019 թ. դեկտեմբերի 13-ին «Երևան իմ սեր» հիմնադրամում տեղի ունեցավ «Զգայական ինտեգրացիայի սենյակի հիմնում` ի նպաստ հաշմանդամություն ունեցող երեխաների, նրանց ընտանիքների և «Լուսե» կենտրոնի աշխատակազմի» ծրագրի 46,213 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը` Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Երևան իմ սեր» հիմնադրամի գործադիր տնօրեն պարոն Արշակ Կարապետյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ նախագահի տիկին Նունե Սարգսյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Չարուհի Բաթոյանի և շատ ուրիշների ներկայությամբ, որոնց թվում էին նաև «Լուսե» կենտրոնի երեխաներն ու նրանց ընտանիքները, ինչպես նաև «Երևան իմ սեր» հիմնադրամի աշխատակազմը :


Ծրագիրը` նախաձեռնված «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից, նպատակ ունի հիմնել զգայական ինտեգրացիայի սենյակ «Լուսե» կենտրոնում, որը կօգնի հատուկ կարիքներ ունեցող երեխաներին և նրանց ծնողներին կառավարելու իրենց հույզերը: Զգայական ինտեգրացիայի թերապիաների միջոցով երեխաները կբարելավեն իրենց ինքնուրույն ապրելու հմտությունները, իսկ նրանց ծնողները մի փոքր հանգստանալու հնարավորություն կունենան` այսպիսով դրսևորելով դրական ծնողավորում: Արդյունքում, մոտ 200 երեխաներ և նրանց խնամակալները օգուտ կքաղեն այս ծրագրից:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին` պարոն Կարապետյանը նշեց, որ դրամաշնորհի պայմանագիրը ազդարարում է փոխադարձ համագործակցության նոր սկզբի մասին և հավելեց, որ մանկական ինտեգրացիոն սենյակի հիմնումը կլինի միակը ողջ հանրապետությունում զգայական ինտեգրացիայի առումով:

Այդ առումով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Չարուհի Բաթոյանը շնորհավորեց բոլոր երեխաներին և ծնողներին և ընդգծեց, որ նման կենտրոնների հիմնումը լիովին համահունչ է պետական քաղաքականությանը և շատ կարևոր է հատկապես երեխաների համայնքում ապրելու իրավունքն ապահովելու համար:

Իր հերթին դեսպան Յամադան ավելացրեց, որ սոցիալ-վերականգնողական կենտրոնների թիվը Հայաստանում դեռևս բավարար չէ` չնայած դրանց խիստ անհրաժեշտությանը: Դեսպանը հուսաց, որ ծրագիրը կլրացնի այդ բացը և կապահովի ընտանիքների սոցիալական և հոգեկան բարեկեցությունը:

Արարողությունը ունեցավ խորհրդանշական ավարտ: «Լուսե» կենտրոնի երեխաներն և աշխատակազմը մեծ հաճությամբ զարդարեցին բակում տեղադրված տոնածառը ՀՀ նախագահի տիկնոջ Նունե Սարգսյանի և այլ պատվավոր հյուրերի հետ:



Դեսպան Յամադան և «Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն Արշակ Կարապետյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն Արշակ Կարապետյանի ողջույնի խոսքը



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարար Չարուհի Բաթոյանի շնորհավորական ուղերձը



Արարողության պատվավոր հյուրերը: ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարար Չարուհի Բաթոյանը, ՀՀ Նախագահի տիկին Նունե Սարգսյանը և դեսպան Յամադան



Դեսպան Յամադան «Լուսէ» կենտրոնի երեխաների հետ



Արարողության խորհրդանշական ավարտը: Դեսպան Յամադան զարդարում է բակում դրված տունաձառը



«Լուսէ» կենտրոնի մանկական երգչախումբը կատարում է Կոմիտասի երգերը



Տիկին Նունե Սարգսյանը զարդարում է
տոնածառը «Լուսե» կենտրոնի երեխաների
հետ